

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳԻՐԸ ԵՎ ԻՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ

(Նամակների տեսություն)

Խմբագրությունս բազմաթիվ շնորհավորական նամակներ ստացել և ստանում է և՛ Մայր Հայրենիքի և՛ Սփյուռքի իր հավատացյալ ընթերցողներից, որոնցում նրանք գրում են այն մասին, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը նրանց համար դարձել է հոգևոր սնունդ մատակարարող մի անհրաժեշտություն, որ նրանք անհամբեր սպասում են ամսագրի ամեն մի նոր համարին, և հաճախ թանկագին թելադրություններ և դիտողություններ են անում ամսագրի բովանդակության և ձևի մասին, և խնդրում են մանավանդ, որ ամսագրի «Մայր Աթոռում» բաժնում ավելի լայն արձագանք գտնի Մայր Աթոռի, Նորին Ս. Օծության, միաբանության, ճեմարանի կյանքի և գործունեության հետ կապված ամեն մի մանրամասնություն։

Խմբագրությունս միշտ ընդառաջել է և կընդառաջի իր ընթերցողների այդ սրտագին բաղձանքին։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վերականգնման աշխատանքներում մեծ ու պատասխանատու դեր է վիճակված մեր այժմյան կրոնական մամուլին— «Էջմիածին», «Սիոն», «Հասկ», «Շողակաթ», «Հայաստանյայց Եկեղեցի», «Հայ կեդրոն» պաշտոնաթերթերին։

«Էջմիածին» ամսագիրը, որպես Ամենայն Հայոց Հայրապետության պաշտոնաթերթ և Վեհափառ Հայրապետի կենդանի խոսքը՝ ուղղված իր սիրելի հոտին, սրբությամբ և պատվով է կատարում իր հոգևոր դերը հայ եկեղեցական կյանքում, և որի էջերից միշտ հնչել են քրիստոնեական վեհ իդեալների, համամարդկային վեհ գաղափարների, հայրենի սրբությունների, եկեղեցասիրության և հայրենասիրության սրբազան պատգամները։

«Էջմիածին» ամսագիրը նաև իր պատմական, հայագիտական և բանասիրական արժեքավոր հոդվածների բովանդակությամբ առաջին տեղերից մեկն է գրավում մեր կրոնական մամուլի շարքերում, արժանանալով իր հավատացյալ բազմաթիվ ընթերցողների բարձր գնահատության և քաջալերանքին։

Ստորև ուրախությամբ ենք հրատարակում ստացված բազմաթիվ նամակներից մեկը։

Հարգարժան խմբագրություն
«Էջմիածին» ամսագրի

Հոգեկան մեծ հաճույքով եմ կարդում «Էջմիածին» ամսագրի ամեն մի հա-

մարը։ Առանց հուզմունքի և հաճախ արտասուքի չեմ կարող ընթերցել հետաքրքրական, բովանդակալից նյութերը։ «Էջմիածին»-ը ինձ համար կենսատու հաց է, առանց որի իմ կյանքը ամբողջական չի լինի։ Ես հավատացած եմ, որ ամեն մի ընթերցող ամսագրում կգտնի համապատասխան նյութ ըստ իր ճաշակի և կմխիթարվի դրանով։ Ամենից շատ ես հետաքրքրվում եմ «Մայր Աթոռում» բաժնով։ Ինձ համար սիրելի է Մայր Աթոռի կյանքից ամեն մի մանրամասնություն։ Ամսագրին այնպիսի բնույթ է տրված, որ ամեն մի հայ ուշի ուշով կարդա այն։ Ամսագիրը մի տեսակ սրտագին, հոգեկան կապ է Ս. էջմիածնի և հավատացյալների միջև։ Անգնահատելի է մանավանդ ամսագրի կատարած բարոյական և դաստիարակչական դերը հայ կյանքում, աշխարհիս ողջ հայերի համար։ Ամեն մի ընտանեկան սեղանի զարդն է մեր հոգու կենդանի խոսք «Էջմիածին» ամսագիրը։ Հաճախ նույնիսկ ժամանակից հետո ձեռք եմ առնում ամսագրի հին համարները՝ նորից կարդալու համար։

«Էջմիածին» ամսագրի ընթերցողները իրենց սրտի խորքում փայփայում ու ջերմ սիրում են այն։ Մեզանում շատ ռուսախոս հայեր կան, նրանց համար ըստ կարելվույն թարգմանում եմ ամսագրի կարևոր նյութերը, մանավանդ «Մայր Աթոռում» բաժինը, և նրանք արտասվալից աչքերով լսում են ամեն ինչ։

Մեծ սիրով ենք կարդում մեր կաթողիկոսների մասին գրված հիշողություններ։ Ցանկալի կլինի հաճախ կարդալ նման հոդվածներ։

Ամբողջ սրտով ցանկանում եմ Ձեզ բեղմնավոր կյանք և գործունեություն։

«Էջմիածին» ամսագրի
ընթերցող՝ Մ. Ն.

12 հուլիսի 1956 թ.
Աստրախան